ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գ. Մարկոսյանի մոտ կայացած խորհրդակցության

18.06.2020թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ն ւ մ՝

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 12.06.2020թ. թիվ 101-Ա/1 հրամանի համաձայն ՀՀ Լոռու մարզին լրացուցիչ թվով երեք ծրագրեր տրամադրելու մասին /մտից գրությունը՝ 16.06.2020թ. թիվ ԶԲ/ԶՊԳՌԱ-6/38869-2020/:
/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահ Գայանե Մարկոսյան/
2. Armenian Tree Project կազմակերպության հետ համագործակցությամբ Տաշիր և Մեծավան համայնքներից ներկայացված ծրագրերի քննարկում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան,
Տաշիր և Մեծավան համայնքների ներկայացուցիչներ,
Տաշիրի ԶՏԿ տնօրեն Ալիսա Ալեքսանյան/

ա/ Մեծավանի համայնքապետարան. «Մեծավան համայնքի Միխայլովկա գյուղի 43.4հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում», իրականացման ժամկետը՝ 19.06.2020թ. – 30.06.2020թ.

բ/ Տաշիրի համայնքապետարան. «Տաշիր համայնքի 45հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում», իրականացման ժամկետը՝ 19.06.2020թ. – 30.06.2020թ.

գ/ Տաշիրի համայնքապետարան. «Տաշիր համայնքի 53.4հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում», իրականացման ժամկետը՝ 19.06.2020թ. – 30.06.2020թ.

3. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի պահանջներին համապատասխան Վաղարշակ Եղիազարյանին՝ Տաշիրի տարածաշրջանում իրականացվող ծրագրերի խորհրդատու նշանակելու մասին:
/Զեկ.՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյան/
4. ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի համայնքապետարանի կողմից «Հարթագյուղ համայնքի Սուրբ Հովհաննես տանող ճանապարհի խճալցում և բարեկարգում» 04.05.2020թ.-ից սկսված և ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի կողմից 01.06.2020թ.-ից դադարեցված ծրագրի և այդ ծրագրի փոխարեն առաջարկվող «Շենավան համայնքի մանկական խաղահրապարակի կառուցում և ցանկապատում» ծրագրի քննարկման մասին:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան,
Սպիտակի ԶՏԿ տնօրեն Գագիկ Ստեփանյան/
5. Այլ հարցեր:

Ո ր ո շ ե ց՝

1. Հաստատել հետևյալ ծրագրերը՝

ա/ Մեծավանի համայնքապետարան. «Մեծավան համայնքի Միխայլովկա գյուղի 43.4հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում», իրականացման ժամկետը՝ 19.06.2020թ. – 30.06.2020թ.

բ/ Տաշիրի համայնքապետարան. «Տաշիր համայնքի 45հա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում», իրականացման ժամկետը՝ 19.06.2020թ. – 30.06.2020թ.

գ/ Տաշիրի համայնքապետարան. «Տաշիր համայնքի 53.4ա անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրում», իրականացման ժամկետը՝ 19.06.2020թ. – 30.06.2020թ.

դ/ Շենավանի համայնքապետարան. «Շենավան համայնքի մանկական խաղահրապարակի կառուցում և ցանկապատում», իրականացման ժամկետը՝ 01.07.2020թ. – 01.09.2020թ.

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Տաշիրի և Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեններին՝

Հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրեր ներկայացրած համայնքների հետ ապահովել աշխատանքներ կատարող աշխատակիցների համապատասխան ձևակերպումները:

2. Տաշիր, Մեծավան և Շենավան համայնքների ղեկավարներին՝

ա/ Ապահովել իրականացվող ծրագրերում ընդգրկվող աշխատակիցների անհրաժեշտ ձևակերպումները Տաշիրի և Սպիտակի տարածքային զբաղվածության կենտրոններում:

բ/ Ֆինանսավորման համար բացել համապատասխան հաշվեհամար /ըստ անհրաժեշտության/, այդ մասին իրազեկելով համապատասխան տարածքային զբաղվածության կենտրոն:

3. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

Գրություն նախապատրաստել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ «Շենավան համայնքի մանկական խաղահրապարակի կառուցում և ցանկապատում» ծրագրի մասին, միաժամանակ ներկայացնել նաև իրականացվելիք ծրագրերի ժամանակացույցը:

4. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Գասպարյանին՝

Ապահովել իրականացվող ծրագրերի մասին հանրային իրազեկումը՝ աշխատանքներին ներգրավելով մասնակից կողմերին /գործընթացի կազմակերպիչներ, շահառուներ/:

/Տարվա ընթացքում/

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/